

Տարեկան զինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 5 կօպէկով:

ԹԻՖԼԻՍՈՒՄ գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
 Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաջօրեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

TRULY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Գաղտնի: Ներքին Լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Թիւրքիայի: Արտաքին Լուրեր:—ՀՆՈՒԱՊՐԻՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՌԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Միամիտ մարդու նամակ: Էջմիածնի միաբանութեան ներկայ դրութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՅ

Փետրվարի 27-ին

Երեկոյեան ուրի ժամն է. այս բուռէիս վերա-
դարձած փողոցից, շտապում եմ ձեզ մի քանի
տեղեկութիւններ հաղորդել մի հետաքրքիր անցքի
մասին:

Այսօր ուռու արհեստագործները, բանաւորները և անհատարակ մշակ դասակարգը յարձակվելով քաղաքի թուրքերի վրա, ծեծում են նրանց ուր որ պատահում են: Թէ ինչից է ծագել կռիւլը առ այժմ դժուար է հաստատել ասել, որովհետեւ պատճառները բազմառեսակ են պատմում. թուրքերը հաւատացնում են թէ ուռուներն են սկսել առաջացնել և իցէ պատճառի, իսկ վերջինների ակառուսին են հաստատում, բայց ասելի հաւանական է հետեւեալը, որը ինձ պատմեցին միաբերան մի քանի հայեր, որոնք կռուի սկզբում ականատես են եղել: Այնօրվայ մի ժամին մի հարբած ուռս բանւոր մտնում է մի թուրքի խոհանոց (քարաբլանան) կերակրվելու, վերջացնելով ուտելը խանութից կամենում է դուրս գալ կերակրի փողը վճարած: Ալքոհօլի ազդեցութեան տակ չը կարողանալով պահել իր հաւատարակչութիւնը յանկարծ կպչում է դռան առակինիներեն և սրանցից մէկը փչրում, խանանոց տէրը բռնում է ուռսի օձիքից և պահանջում սրանից աս-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻԱՄԻՏ ՄԱՐԴՈՒ ՆԱՄԱԿԸ

Ի քաղաքն Ա. փետրվարի 17-ին

Խմբագրապետ տեղ: Խմբարկահմնեիրիցս լսել
 եմ, որ ձեր հրամանքը մին զամբիւղ առնել, որ
 ձեր աւելորդ իղթիւրը և անախտան ու դժուար
 կարդացող նամակները նորա մէջն էք գցում: Կա
 ձեռնալից շատ խոնարհաբար խնդրում եմ իմ այս
 նամակս այն զամբիւղի մէջը չը գցել, այլ նա
 ղուժիւն քաշէք մինչև վերջը կարդաք և անպատ-
 ճառ էլ տպէք ձեր զովական լրագրում: Ձեր
 հրամանքը ի հարկէ չէք դիտում, թէ ես ինչու
 համար եմ «անպատճառ» ասում, բայց ես կը
 բացատրեմ այն յայտով, որ իմ աշխատքս կը կա-
 տարէ:

[illegible]

պակիեր՝ փողեր, վերջինը՝ չէ ուզում տալ, բայց թուրքը այնուամենայնիւ ձեռք չէ վերցնում նրանից և տակպում է փողը՝ վճարելով՝ Չը կարողանալով դռակը իրան, հարթած ուռսը մի ասպտակ է տալիս թուրքին, սա եւս ի հարկէ այդ պարտքը իր վրա չէ թողնում և այդպիսով երկուսն էլ մեջ կուխ է բացվում։ Այդ ժամանակ վրա է հասնում մի թուրք և հաւաքվում են այս ու այն կողմից հարթած ուռսներ, մի թուրք կամենում է կռիւր հանդուստցենը, բայց ուռսները սրան եւ մի լաւ ձեռնում են, այս մէկ է նոյն տեսակ վարվում են և մի հայի հետ, որը նոյնպէս նոր հասած կամենում է եղել կռիւր դադարանցին։

Աղբյուրն է սկսվում, ինչպես հաստատացնում են,
կռիւր, բայց ինչ և իցէ նա քանի դնում սաստ-
կանում է, ժողովուրդը այս ու այն կողմից հա-
ւաքվում է և հնազնեւէ աղմուկը աւելանում է.
ուռաները բարձրանում են վերևի փողոցը, ուր
գտնվում են թուրք նպարապաճառների խանութ-
ները: Կնճ յաջողվեց վրա հասնել այն ժամանակ,
երբ թուրքերը շտապով կողպում էին իրանց խա-
նութները և նրանց դռների վրա, ինչպես ան-
ցեալ անգամ, կախձով կամ ածուխով խաչաձև
գծեր նրանց քաշում որպէս զի ուռաները կարծես
էին նրանք քրիստոնեաներին են պատկանում և
ազատ թողնեն կողոպուտից: Այսպէս ուռաները
մինչև երեկոյեան եօթ ժամը խանութները անու-
շաղիր թողնելով, յարձակվում են իրանց, թուր-
քերի վրա. վերջինները ևս անգործ չեն մնում,
նրանք շտապում են ինքնապաշտպանութեան հա-
մար քարեր և փայտեր վերցնել: Վուրժ ժամանակ հա-
յերը օգնում էին ուռաներին և դարձնաաւելն այն է
որ իրանք կռիւ բարձրացնողները, ուռաները երբ
որ թուրքերի ձեռքում տեսնում էին քարեր ճանձնե-
լի նման ցրվում էին, իսկ հայերը առաջ էին վա-
զում, շարտեր հայերից օգնում էին թուրքերին
Մինչև ութ ժամը, որ ևս դուրսն և՛ չէին, դեռ

տալած լաւ լաւ խօսքերը միասին կարգան և մի-
ասին ուրախանան: Հիրու և մէկէլ տարին էլ պ-
կ... աղան էր լրագիր ստանում թիֆլիսից և նը-
րա մէջի լաւ լաւ կտորները այնպէս ուրախ ու-
րախ բերում մեր աղայի մօտ կարողում և
միասին շատ ուրախանում և ձեր լրագիրը շատ
գովում էին: Եւ պէտք է ասեմ ձեր հրամանացը
որ մեր աղան մի բաւական աղեր մարդ է և
Ներուտազէմ է գնաւած է. իսկ պ. Կ... աղան ա-
սում են 7 տարի ծով պահելուց յետոյ ս. Կա-
րապետ (ծառայ եմ նորան) ուխտ է գնացել: Մեր
աղան քաղաքիս մայր եկեղեցու երեցիօխն է, Ժա-
մի բոլոր փողերը նորա մօտ է. հաշիւները ինքն
է պահում, և զպողոցումն էլ հոգաբարձու է: Իս-
պաքան տարի է մեր աղայի խանութումն եմ, եւ
նրան միշտ այդ պաշտօնումն եմ տեսել. քաղա-
քը նորա վրա մեծ վստահութիւն ունի. միշտ ու-
րիչ երեցիքները վտխում են, աղայ մեր ա-
ղան ասին անպա՛կ ընտրվում է զանձապահ և հո-
գաբարձու, որովհետեւ մեր բարեկամները, ազգա-
կանները, ծանօթները և մեր աղայի պարտական-
ները շատ են, և նորանք միշտ մեր աղային են
ընտրում: Պ. Կ... աղան էլ է զանձապահ, բայց
նա ս. Ստատածածնի եկեղեցու և այնտեղի թա-
ղական զարդի հոգաբարձուն է: Եւ սա էլ պէտք
է ասեմ, որ մեր այս երկու եկեղեցիքը շատ հա-
րուստ են, և մեր բոլոր գաւառի ուխտատեղիներ
ըի եկամուտները նշանակված են մեր զգորցիներ
ըին, և այն եկամուտներն էլ մեր աղան է փողո-
վում պ. Կ... աղայի հետ միասին: Հիմա ի հա-
կէ, բարձրապատիւ տէր իմ, ձեր հրամանքը լա-
կիմանաք, թէ մեր աղաները ինչու համար են ու-
րախանում ձեր լրագրովը և ձեր ասածներինց ոյ
կտորներն են որ մեր աղաներին դուր են զալիս
մենք չենք գիտում և գիտե՞նալու էլ իրաւունք
չունենք, որովհետեւ մեզ երբեք հրաման չը կա-
ոչ թէ լրագիր կարդալու—վայ ինձ, մեզ կախոյ
դուրս կանեն եթէ մի լրագիր տեսնեն մեր ձեռ-

Կիւրը այնտեղը չէր հասած, որ ղէշները դործած
 վէշն, միայն թուրքերը մի քանի անգամ ստորճա-
 նակներով արձակեցին, բայց անվնաս: Բայց սար-
 սառիկին՝ այն է, որ երբ մի թուրք առանձնապէս
 ընկնում էր ռուսների ձեռքը դժուարութեամբ էր
 արդարւոյն մահից ազատվել: Սարսառիկէի էր
 տեսնել մի խեղճ անվնաս վաճառական թուրք
 որի բլթին, ու բերանից մութօքների հարուստնե-
 րից արհււճ, աղբիւրի նման էր հասում, բայց
 ոչ ոք չէր կարող նրան խել հարբաճների ձեռ-
 քից. ով որ համարձակվում էր թակովոնիքին
 պաշտպանել, նա ըիսկ էր անում իր սեպհա-
 կան զլխով: Ղեշապէս օրը միջինց, բայց
 ռուսները չը նախելով ոչ պովիցիայի, ոչ նա-
 հանգապէսն է ոչ էլ ուրիշ կառավարիչներ հա-
 մարակաւ խօսքերի չէն կամնում քաշվել իրանց
 տները և խումբ կապած այս ու այն կողմ են
 դնում, թուրքերի խնամութեանը, ղոշների կոտոր-
 տում, ապակիները փշտում և ապրանքները այս
 ու այն կողմ ցրվում: Տուն վերադառնալու ժա-
 մանակ ինձ հանդիպեց հետեեալ տեսարանը:
 Մօտ տասն և հինգ ռուսներ աշխատում են կոտ-
 րել մի թէյալվաճառի խանութի դռները, ուր թա-
 զնված էին մի քանի պարսիկներ, մութիկներից
 մի յաղթանդամը երկու ձեռքով բռնել էր խանութ-
 քի դռները, իսկ մնացիայնը կանդնելով նրա
 ետքում հերթով բռնել էին իրարու մէջքից. և քա-
 չում որպէս զի կարողանան այսպիսով իրանց
 նպատակին հասնել: Երբ դռները այս կերպ փռ-
 րեցին և մտան խանութի ներսը, այստեղից ինձ
 երեսցին հերթ թէյ չորս պարսիկներ, որոնք մե-
 ուելային ղէշքով քարացած կանգնած սպասում
 էին իրանց դատավճռին: Ես գիտէի թէ սրանց
 վիճակը ինչ է լինելու և հենց այդ պատճառով
 այնքան թալշ զտնկեցայ, որ չը կարողացայ եր-
 կար ակնատեսն լինել անմխոթ տեսարանի
 և երբ ռուսները քարձակեցին և պարսիկների դռ-

բերն—այլ նայն իսկ հետաքրքրվելու էլ: Բայց երբեմն աղաները լրացիր կարգավիտ, կամայ ակամայ, ականջ է՝ լսում է, որքան էլ որ արգելված լինի: Ելիլու տարի սորանից առաջ պ. Ա... աղաները բերաւ լրացիրը և կարգացին մի յոդում, որ պատկանում էր Տաճկաստանի մի ընկերութեան աշխու չը տար. և այն ընկերութեան նունը նուայն էր, բայց լրացրում ամով էր որ մի ֆրանսական մեծ ընկերութիւն էլ, որ մեծ իրօքերի հաշիւներ ունի, մէկ անգամ չէ կարողացել իր հաշիւը ժամանակին ներկայացնել ձիշչ այն ժամանակին էլ մեր երկու աղաներից հաշիւ կին պահանջում, և մի քանի անձինք եկան մեր սղաների մօտ, և մեր աղաներն էլ իրօխտաւ լով փշտ այն թիւրթն էին կարդում, թէ «անա տեսէք Ֆրանսիայի ընկերութիւնը և Տաճկաստանի ընկերութիւնը (կարծեմ սովկոնց ամանաժողովը) չէ տալիս հաշիւները, մննք միթէ նրանցից շատ լաւ հաշուաղէտները են»: Եւ այս կերպով բարձապատիւ տէր իմ, դուք ազատեցիք մեր բազմախոտ աղաներին: (Այսինքն ևս դու լաւ չես բոտում, թէ այն մեր աղաների բանը հնչտացող լրացիրը «Մշակն» է թէ «Մեղուն», ևս որովհետեւ ուրիշներից լսել եմ, որ «Մշակն» է լաւ չաղիր, վասնորով և կարծում եմ, որ ձեր լրացին էր): Մի ուրիշ անգամ էլ մեր աղաների ձեր լրացիրը էլի փառաւոր կերպով ազատեց: Մենք լսել էինք, որ մեր աղան 5,300 բոքլու նմար փոխաբէն ծախք չէ ցոյց տալիս, և պ. Ա... աղայի վրա եկեղեցու փողից կար 2,660 բոքլը. որ նրա համար էլ ասում էին, թէ ինքն իրան համար է վեր առել: Երբ որ այն ժամանակ մաղիկ եկան և մեր աղաներին նեղացնել էին ուզում, յանկարծ մի որ Ա.... աղան լրացիրը մեծ ուրնութիւնով բերաւ ու բարձր ձայնով կարգում, որ ննք էլ լսեցինք և այն յոդումը մեր լսանութիւնիդների առաջ աղաները միշտ կարգում էին Այնտեղ ավամ էր, որ Թիֆլիսի քաղաքա-

ռոյը լսեցի, ես շտապեցի տուն մտնել, հունենա-
լով այնքան սիրտ, որ կարողանայի վկայ լինել
բարձրագույն տեսարանին:

Այժմ բոլոր փողոցներում դրված են զոր-
քեր, որոնք պիտի մինչև լոյս պահպանեն քա-
ղաքի հանգստությունը: Արմինիստացիան ան-
գործ է, վաղը կը հաղորդեն առեփն մանրա-
ման տեղեկություններ, իսկ առ այժմ այդա-
նով բաակամացքը քստ որում դեռ յայտնի է
թէ ինչ է լինելու այս դիշեր և վաղը, բայց յոյս
կայ որ խաղաղությունը անցնի որովհետև այսօր
բարեկենդանի վերջին օրն էր և ուռւ բանուրնե-
լը մի փոքր սովորականից առեփն էին ներս ածել
դառն ջուրը, իսկ վաղը երեկ երբ կարծեսանա,
իրանք ևս կը զարմանան:

Շիրվանշահի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բնկերացողը ուշադրութիւնն ենք դարձնում «Արշակի» երէկվայ, 42 համարի բանասիրական բաժնում տպւած Ե. Սարուխանեանցի յօդուածի վրա «Արցունի գաւառի» մասին: Այդ տեսակ ուսումնասիրութիւնը հայ ժողովրդի կեանքի, բարք ու վարքերի ու նրա վնասակար նախապաշարմունքներին, անհրաժեշտ է մեզ համար: Լրացուցիւնը այդ տեսակ յօդուածներէջ մեծ օգուտներ կարող է բաղեի, ժամանակով իր եզրակացութիւնները դուրս բերելով այդպիսի յօդուածներէջ:

Այդ գրում են հետևելով: «Մեր հանդարտ և խաղաղ Լճու մէջ վերջին տարիներու յաճախ սկսել են կրկնել գողութիւններ, մարդասպանութիւններ, խուտերի ղեղերի կրակ տալը, այգիներ, որթեր կտրատելը, աների ու խանութների ղեղեր կտրուելը և այլ այդ տեսակ անկարգութիւններ: Այնքան փառքով ամսի 25-ին ոսկերի

յիսն դրամայի հաշիւներինց մի մեծ գումար պակաս է գտնվել, և էլ չէ՞ չէ՞ զիտում՝ «Մշակին» էլ թէ՛ «Մեղուն» պաշտպանում էր այդ պակասը, որ մէջ-տեղը կորել էր, և ասում էր թէ՛ ուրիշ տեղերում աւելի մեծ մեծ գումարներով են կորցնում, հիմա մի 10 կամ 19 հազար լուրջլին էլ մի բան է։ Մեր աղաներին էլ ասում էին, «տեսէ՛ք ձեռ գոլած՝ թրխակների թիֆլին մայրաքաղաքը, ամա այնտեղ, որ լաւ հաշուապահներ կան և երկաթի մոլորակներ կան, էլի փող է կորչում, ապա պատեղ չի կոր-չի, տեսնում է՞ք՝ ահա լրագիրն էլ է պաշտպա-նում, որ աւելի շատ չէ կորել։» Բայց այս օրերս մանաւանդ շատ ուրախ և երջանիկ են մեր աղա-ները. և պատճառը դարձեալ այդ լրագիրն է, և էլի կարծում եմ որ «Մշակին» է, թէպէտ և գուցէ «Մեղուն» էլ լինի, լաւ չեմ զիտում։ Ահա բանը ինչու՞ն է, ամեն մարդ ասում է, խօսում է, թէ՛ իջվածանում մեր վե՛նափառ կաթնուղիկայի միա-ճանկելուց յետոյ, վիճարանում փող բան չեն գտել, և հիմա կարպպետ եպիսկոպոսի մատանին և ուրիշ շատ ծանրազին բաներ Մանկունի կախ-կողտի և Ստեփանիկ աղայի տներումն են զոռ-նում։ Մեր աղաները այդ գիշեալ բարձրապատիւ անձանց հետ շատ բարեկամ են. չեմ ասում թէ՛ փողի-բանի հաշիւներ ունեն, չէ՛, այլ բա ծանօթ է ինի։ Հիմա որ այդ եպիսկոպոսից և Ստեփանիկ աղայից և միւսանկրեց եպիսկոպոսից և Ստեփանիկ աղայից պահանջում են, այդ լրագիրը պաշտպանում է նրանց, թէ ինչ որ ի Տէր հանգուցեալ Հայրա-պետը սրան նրան տուէ՛ր ընծայել է, այն պէտք է յետ չը պահանջվի։ Մեր աղաները այս պաշտ-պանութիւնան համար մեծ ուրախութիւնան միջ են ու հառապացած են, որ ամեն կաթնուղիկու և ե-պիսկոպոս և քահանայ և հոգաբարձու իրանց յանձ-նած ժողովուրդին պատկանող ստացանածից կա-րող են ու՛ր որ ուղեն և ինչ որ ուղեն ընծայել՝ նրա կենսքումը հաշիւ պահանջող էլ լինի, և նրա մահիցը յետոյ էլ... թէ մեզք է թէ վարձք՝ ի-

